

Հոլանտական պարբերաթերթին նոյն թիւին մէջ²¹ դրամադէտ բարեկամս՝ Matthew van der Voort կը տեղեկացնէր թէ Հերմիթաթի մէջ ղոյութիւն ունի ուրիշ արծաթ մետալ մըն ալ, որ նկարագրուած էր Appelի կողմէ (թիւ 1):

Ասկէ զատ, van der Voort, յաջորդ տարին, նոյն պարբերաթերթին մէջ²² գրեց թէ իր հաւաքածոյին մէջ կան ոսկի եւ արծաթ մետալներ, նոյն կնիքէն ելած եւ ճիշտ թիւ 3ին նման: Միաժամանակ պատկերներով պարզեց թէ ոսկի մետալը ծակած ըլլալով՝ ծակը ոսկիով լցուած է, եւ պատկերատիպը փոփոխութիւններու ենթարկուած:

Վերջապէս, հայկական մետալիոններու վրայ վերջին դրոշմն եղաւ Հայաստանի Պետական Պատմութեան թանգարանի դրամադէտական բաժնէն Պր. Հէնրի Սարգիսեանը, որ ուսերէն լեզուով ընդարձակ յօդուած մը հրատարակեց Հերմիթաթի պարբերաթերթին մէջ²³: Այս շատ հետաքրքրական յօդուածով Սարգիսեան մեզի ծանօթ հոլանտահայ մետալիոններու տեսակը բարձրացուց 6էն 9ի:

Այսպէս առաջին անգամ ըլլալով ներկայացուց Հերմիթաթի ոսկի մետալ մը, կոխուած թիւ 5ի կնիքով, բայց Ակոզմին²⁴ առանց ՅՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ գրութեան, եւ Բեկոզմին վարի մասը MOSES BENIAT գրութեամբ (թիւ 6): Հետաքրքրական է նաեւ որ նոյն թանգարանին մէջ ղոյութիւն ունի ուրիշ ոսկի մետալ մըն ալ, որ դարձեալ թիւ 5ի նմանող կնիքով կոխուած է, որուն Ակոզմին եւ Բեկոզմին վարի մասը բոլորովին պարապ է, այսինքն՝ ոչ ՅՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ, եւ ոչ ալ MOSES BENIAT գրութիւն ունի (թիւ 7): Այս երկու մետալները կրնանք նորոգութիւն նկատել:

Սարգիսեան առաջին անգամ ըլլալով նոյն յօդուածին մէջ հրատարակեց նոր եւ խոշոր ձուածեւ ոսկի մետալ մը (թիւ 9), նոյնպէս Հերմիթաթի հաւաքածոյէն: Ասիկա կշիռով ամենածանր հայկական մետալն է, եւ արժանի է մասնաւոր ուշադրութեան:

Յաջորդ տարին (1974), Սարգիսեան գրեց հայերէն ընդարձակ յօդուած մը՝ հայկական հարսանեկան մետալներու մասին, ուր իր ուսերէն յօդուածին մէջ յիշուած մետալներուն վրայ աւելցուց թիւ 10ին արծաթը, որ կը գտնուի Հերմիթաթի թանգարանին մէջ: Այս

21. MATTHEW VAN DER VOORT, De Geuzenpenning, Juli 1961, p. 25-29.

22. MATTHEW VAN DER VOORT, De Geuzenpenning, Okt. 1962, p. 37-42.

23. A. SARKISIAN, Hermitage Journal, XXXVII, 1973, p. 74-77.

24. Հայ լեզուին մէջ obverse եւ reverse, այսինքն՝ դրամին մէջ կամ ժիւս կողմը նշանակող բառ ղոյութիւն չունի, եւ միշտ Ա. կողմը եւ Բ. կողմը բառերը կը դրոշմուին: Ընթերցողը կը ներէ եթէ այս առթիւ յօդին մէջ Ակոզմ (obverse) եւ Բեկոզմ (reverse) բառերը:

յօդուածին մէջ, Սարգիսեան կը փոսի նաեւ Հոլանտայէն դուրս կոխուած քանի մը ուրիշ հարսանեկան մետալներու մասին²⁵:

ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԿԸ

Թիւ 1

Ակոզմը.՝ ՍՈՒՐԲ ԱՄՈՒՍ - ՆՈՒԹԻՒՆ

Վերի շրջանակի գրութիւն

ՅՈՒ ՅԱՐՈՒ - ԹԻՒՆ

Ստորին եզերքի հորիզոնական գրութիւն

Խորանի աջակողմը (նայողին ալ աջակողմը) կանգնած է հարսը, իսկ ձախին՝ փեսան: Երկուքը իրարու կը նային, ալ ձեռքերն իրարու սեղմած: Խորանին վրայ, ձեռքերուն տակ կը տեսնուին կրարու բոցեր, իսկ խորանի ուղղահայեաց կողմին վրայ կը տեսնուին երկու բոցավառ սրտեր: Վերը, դաշտին մէջ, ամպերէն վար ցուցող ճառագայթներ կը հեղեղեն երիտասարդ ամուսինները:

Բեկոզմը.՝ ՆԱԽԱՏԵՍՈՒ - ԹԻՒՆ ԱՄՈՒՍ

Վերի շրջանակի գրութիւն

Չարդարուած խորանին վրայ կը տեսնուին երկու ալ բազուկներ, որոնք իրար սղմած են: Աջ կողմի ձեռքը կնոջական է, իսկ ձախ կողմինը՝ այր մարդու: Խորանի ուղղահայեաց երեսին վրայ կը տեսնուին երկու աղաւնիներ, որոնք կտուց կտուցի կը համբուրուին: Երկինքէն ճառագայթներ կը լուսաւորեն աջերը:

Ա.՝ Արծաթէ օրինակ մը կը պահուի Հերմիթաթի թանգարանին մէջ: Զուածեւ, 41×36 հզրդմ. մետութեամբ, կշիռը՝ 15.08 կրամ: Հերմիթաթի պահարանին թիւ 20418²⁶:

Բ.՝ Ըստ Սարգիսեանի, այս մետալին պընձէ օրինակը կը գտնուի Երեւանի

Ե. Սիմոնեանի հաւաքածոյին մէջ:

Գ.՝ Այս մետալին դժգոհութիւնը կը տեսնուի Appelի գրքին մէջ²⁷:

25. Հ. Վ. ՍԱՐԳՍԵԱՆ, Հայկական հարսանեկան մետալների, «Էրաբեր հասարակական դիտարկումներ» (Երեւան), 1974, Թ. 7, էջ 48-56:

26. ՏԵՍ Ծանօթ. Թիւ 23:

27. ՏԵՍ Ծանօթ. Թիւ 5:

Թիւ 2

ԱԿՈՂՄԸ. — Յակոբջանի որդի յօհան տոնիմ խալտաբեանց վնկն ծնել
Զուղայ յայս քուական 1710 որ այժմ կայ յամադրոյմ 1740:

Գրութիւնը մետալին ամբողջ շրջանակը կ'առնէ: Երբեմն ա զիրը
ներկայացուած է մէկ ուղղահայեաց գծով:

Դաշտին մէջ, ձախ կողմը, ժապաւէնի վրայ վերէն վար կը կար-
դացուի «խոհեմ — ութ»: Իսկ աջ կողմը, վերէն վար՝ «եւ առա —
ֆինու»:

«Գառն Աստուծոյ»ին ներքեւ՝ «յաղթէ ամեմայնի»:

Մետալի վերի մասը՝ խաչածայր արքայական թագ, որուն ներ-
քեւ՝ գեղարուեստական շրջանակի մէջ կը տեսնուի Գառն Աստուծոյ
մը, դրօշակաւոր խաչը բռնած եւ ձախ կանգնած՝ երկրագունտի վը-
րայ: Գառնուկին վերեւ կը տեսնուի աղանակերպ Սուրբ Հոգին,
որմէ ճառագայթներ դուրս կը ցոլան: Դաշտին աջ եւ ձախ կողմերը
կը տեսնուին երկու սիրտեր. աջակողմեանէն դուրս կը թափին տե-
րեալի ճիւղեր, ձախակողմեանէն՝ պտուղներ:

Շրջանակի ձախ կողմը կանգնած է կին մը, որ կը ներկայացնէ
խոհեմութիւնը. ձախ ձեռքով բռնած է օձ մը, իսկ աջով՝ հայելի մը:
Շրջանակի աջակողմեան կինը կը ներկայացնէ առաքինութիւնը, որ
երկու ձեռքով բռնած է տերեւազարդ դափնեպսակ մը:

Բեկազմը. — Վերի հորիզոնական ժապաւէնին վրայ կը կարդացուի
«Մաքուր յաւատ», իսկ ձախ կողմի խալտաբեան տակ, շեղակի ժա-
պաւէնին վրայ՝ «յաստատում յոյս». իսկ աջ կողմի ժապաւէնին վը-
րայ՝ «կատարել սէր»: Վարի եզերքը «AMSTERDAM 1757»:

Մետալին կեդրոնը, լուսազարդ ճառագայթներու մէջ կը տես-
նուի եռանկիւն մը, որուն երեք անկիւններուն քոյրորակներուն մէջ
դրուած է, ձախին՝ «ՀԱՅՐ», աջին՝ «ՈՐԴԻ», եւ վարը՝ «ՀՈԳԻ» բա-
ռերը: Եռանկիւնին կեդրոնի քոյրորակին մէջ դրուած է «ԱՅ»: Ե-
ռանկիւնին երեք քոյրորակները միացած են զուգահեռական գծերով,
որոնց մէջ կը կարդացուի «ՈՐ Է» գրութիւնը՝ երեք անգամ: Կեդրո-
նի կլորակը միացած է եռանկիւնի երեք կլորակներուն, եւ միացնող
գծերուն վրայ կը տեսնուի «է» գիրը:

Մետալին վերի մասին վրայ կայ Սկիհը, խաչանիշ նշխարքով:
Սկիհին ձախ կողմը կը տեսնուին Տասնաբանեայ Պատուիրաններու
տախտակները, որոնց ձախին վրայ կը կարդացուի I, II, III եւ ա-
ջին վրայ IV, V, VI, VII, VIII, IX, X գրերը: Սկիհին աջ կողմը
կայ (գիտողին ալ աջակողմը) Աստուածաշունչը, որուն վրայ հանգ-
չած է խաչը:

Մետալի դաշտին ձախ կողմը կը տեսնուի խալտաբեան մը, իսկ աջ
կողմը՝ սիրտ մը, փշապսակի մէջ: Իսկ կեդրոնի եռանկիւնին տակ,
մետալին վարի մասին մէջ կը տեսնուի Սերովբէի թեւաւոր գլուխ մը:
Մետալին դաշտը լեցուած է ամպերով:

Ա. — Արծաթէ օրինակ մը՝ որ կը պահուէր Leidenի Համալսարանի Թանգա-
րանին մէջ, փոխանցուած է Hagueի արքայական Թանգարանը, ուր կը գտնուի
ներկայիս: Ձուածեւ, 53X50 հզրդմ. մեծութեամբ, կշիռը՝ 28.50 կրամ: Թանգա-
րանի թիւ 1757:

Բ. — Նոյն օրինակէն հատ մը ծախուեցաւ J. Schulmanի աճուրդին մէջ,
1938թն²⁸, ներկայիս ուր ըլլալը չի գիտցուիր:

Թիւ 3

ԱԿՈՂՄԸ. — Մետալի մասնիկ որդ ալեքսան անապատցի վնկան ծնել
այս քուական 1727 որ այժմ կայ այ ամադրոյմ 1742:

Գրութիւնը մետալին ամբողջ շրջանակը կը բռնէ: Յաճախ ա
գիրը ներկայացուած է մէկ ուղղահայեաց գծիկով: Կրճատուած բա-
ռերուն վերեւ դրուած են երկու գծիկներ՝ շեղանկու համար թէ բա-
ռը սղուած է: Որդի բառին դ. եւ ի գրերը ազուցիկ են:

Դաշտին ձախ կողմը, ժապաւէնի վրայ, վերէն վար կը կարդաց-
ուի «խոհեմ — ութիւն». իսկ աջ կողմը, դարձեալ վերէն վար՝ «եւ
առա — ֆինուրիւն»: Երկու գրութեանց մէջ ալ ք եւ ի գրերը ազու-
ցիկ են:

Կեդրոնի «Գառն Աստուծոյ»ին ներքեւ՝ «յաղթէ ամէ»:

Ամբողջ մետալին Ակողմի պատկերատիպը շատ կը նմանի Թիւ
2ին, թէեւ եթէ ուշադրութեամբ քննենք՝ կը տեսնենք որ ընդօրի-
նակութիւնը շատ ճշտօրէն չէ կատարուած, եւ որոշ՝ բայց փոքր
տարբերութիւններ կան: Այսպէս՝ ժապաւէնը, կիները, սրտերը, ճա-
ռագայթները, անոնց շրջանակը եւլն. քիչ մը կը տարբերին Թիւ 2էն:
Նաեւ կիները կանգնած են քառանկիւն պատուանդանի վրայ, մինչ-
դեռ Թիւ 2ի պատուանդանը տարբեր է:

Բեկազմը. — «Մաքուր հաւատ» վերի հորիզոնական ժապաւէնին
վրայ: Ձախ կողմի խալտաբեան տակ, իսկ աջ կողմի ժապաւէնին վրայ՝
կարդացուի «հաստատում յոյս», իսկ աջ կողմի ժապաւէնին վը-
րայ՝ «կատարել սէր»: Ինչպէս կը տեսնուի, այս գրութիւնները ուղղա-
գրական տեսակով աւելի ճիշտ են՝ քան Թիւ 2ի գրութիւնները: Կըր-
ճատեալ բառերը հոս ալ նշանակուած են գծիկներով:

Դարձեալ ամբողջ պատկերատիպը կը նմանի քիւ 2ին. բայց յայտնի է որ որոշ փոքր փոփոխումներ եղած են՝ ընդօրինակութեան միջոցին: Հոս չկայ AMSTERDAM գրութիւնը՝ թեւաւոր Սերով-րէին ներքեւ: Կը տեսնենք նաեւ որ խարիսխը, սիրտը, վսաչը եւ Ս. Դերբը քիչ մը կը տարբերին քիւ 2էն. բայց տարակոյս չկայ որ նոյն օրինակէն առնուած են:

Կեդրոնի եռանկիւնը կը նմանի ճիշտ քիւ 2ի եռանկիւնին:

Որոշ տարբերութիւններ կը տեսնուին՝ դաշտը լեցնող ամպերուն մէջ:

Ա.՝ Ոսկի օրինակ մը կը գտնուի ստորագրեալիս հաւաքածոյին մէջ: Նախ կը պատկանէր Matthew van der Voort²⁹, որ ծախեց Վսդերտաւի դրամապահատ J. Schulmanին: Անկէ անցաւ ինծի, 1973ին: Զուածեւ, 42×39 հզրդմ. մեծութեամբ, կշիռ՝ 30.04 կրամ:

Բ.՝ Արծաթ օրինակ մը շատոնց է վեր կը գտնուի Hagueի արքայական Թանգարանին մէջ: Կշիռ՝ 22 կրամ³⁰: Թանգարանի թիւ 1742:

Գ.՝ Երկրորդ արծաթ օրինակ մը կը գտնուի նոյնպէս ստորագրեալիս հաւաքածոյին մէջ: Ասիկա գնուեցաւ ոսկիին հետ, J. Schulmanէն, 1973ին. կշիռ՝ 21.30 կրամ:

Դ.՝ Վենետիկի Միթարեան Թանգարանը. Ոսկեզօծ արծաթ. կշիռ՝ 22.10 կրամ:

Թիւ 4

Ակոզմը.՝ Շրջանակի գրութիւնը ճիշտ քիւ 3ին պէս: Նոյնպէս ժապաւէններու վրայի գրութիւնները:

Պատկերատիպը շատ կը նմանի քիւ 3ին, բայց յայտնի է որ արուեստագէտը որոշ փոփոխումներ ըրած է: Եթէ ուշադրութեամբ բաղդատենք քիւ 2 եւ քիւ 3 մետալներուն հետ, կը տեսնենք որ փոքր տարբերութիւններ կան՝ ամբողջ երեսին վրայ: Մասնաւորապէս կիներու պատուանդանը աւելի կը նմանի քիւ 3ին քան թէ քիւ 2ին:

Ինչպէս Macler³¹ գրած էր, ասիկա այն կնիքն է՝ որուն դաճը տեսած էր Զերադ³², Hagueի արքայական Թանգարանին մէջ: Կնիքը կը գտնուի Haarlemի Teyler Թանգարանին մէջ: Մեծութիւնը նշանակուած է 53×49 հզրդմ., ինչ որ քիւ 2ին չափն է: Այս կնիքէն կոխուած մետալ գտնուած չէ տակաւին:

29. Տե՛ս Ծանօթ. թիւ. 21:

30. Տե՛ս Ծանօթ. թիւ. 12:

31. Տե՛ս Ծանօթ. թիւ. 12:

32. Տե՛ս Ծանօթ. թիւ. 11:

Թիւ 5

Ակոզմը.՝ ՍՈՒՐԲ. ԱՄՈՒՍՆՈՒԹԻ:

Վերի շրջանակին մէջ

ՅՈԼ. ՅԱՐՈՒԹԻ.

Ստորին եզերքի հորիզոնական գրութիւն

I. G. H. F 1749

Աջ՝ Կոզմի պատուամագնիս վրայ

Կը տեսնուի խորան մը, որուն աջ կողմը (նաեւ ղեկողին աջա-կողմը) կանգնած է հարսը, իսկ ձախ կողմը՝ փեսան: Անոնք իրա-րու կը նային եւ աջ ձեռքերնին իրարու սեղմած են: Խորանին վը-րայ կը տեսնուին բոցեր. իսկ խորանին երեսը զարդարուած է եր-կու բոցավառ սրտերով: Վերը՝ դաշտին մէջ, ամպերուն մէջէն վար-ցողացող ճառագայթներ կը հեղեղեն երիտասարդ ամուլը:

Բեկոզմը.՝ ՆԱԽԱՏՆՍՈՒԹԻ. - ԱԾԱՅԻՆ

Վերի շրջանակի գրութիւն

Դրութեան տակ՝ ճառագայթներ կը ցոլան հարսին (աջ կողմը) եւ փեսային (ձախ կողմը) բազուկներուն վրայ, որոնց աջ ձեռքերը իրար կը սեղմեն: Զեռքերուն տակ գտնուող զարդարուն խորանին երեսին վրայ կը տեսնուին երկու թեւաբաց աղաւնիներ, որոնք կը-տուց կտուցի կը համբուրուին:

Ա.՝ Ոսկի օրինակ մը կը գտնուի ստորագրեալիս հաւաքածոյին մէջ, Կլորակ, տրամագիծ՝ 39 հզրդմ. եւ կշիռ՝ 18.7 կրամ (օղակ): Բերուած է Պարսկաստանէն:

Բ.՝ Ըստ Սարգիսեանի³³, ճիշտ ասոր նման երկրորդ ոսկի օրինակ մը կը գտնուի Հերմիթաժի Թանգարանին մէջ, Տրամագիծ՝ 39 հզրդմ. եւ կշիռ՝ 17.78 կրամ (օղակով): Թանգարանի թիւ՝ 1158:

Գ.՝ Այս մետալին արծաթը շատոնց է վեր ծանօթ է եւ կը գտնուի Hagueի արքայական Թանգարանը: Զերադ³⁴ եւ Սարգիսեան³⁵ զայն նկատած էին ոսկեզօծ: Բայց, իրականին մէջ, ան արծաթ է, Macler³⁶ կու տայ անոր կշիռը՝ 18 կրամ, մեծութիւնը 38 հզրդմ.: Թանգարանի թիւը՝ 1749:

33. Տե՛ս Ծանօթ. թիւ. 23:

34. Տե՛ս Ծանօթ. թիւ. 11:

35. Տե՛ս Ծանօթ. թիւ. 2:

36. Տե՛ս Ծանօթ. թիւ. 12:

Դ.- Ոսկեզօծ արծաթ կտոր մը ծախուեցաւ 1958ին Schulmanի աճուրդին մէջ³⁷, Թիւ 1161: Ներկայիս՝ այս կտորին ուր ըլլալը չի գիտցուիր: Հետաքրքրական է յիշել թէ այս մետալը կը պատկանէր Meyerի հաւաքածոյին³⁸:

Ն.- Ստորագրեալիս հաւաքածոյին մէջ կայ այս մետալին ոսկի թափօնն: Այնպէս կ'երեւի՝ թէ իսկական մետալին վրայէն առնուած է. բայց որովհետեւ պատկերատիպը եւ դրերը պէտք եղածին պէս յստակ չեն եղած, փորձելով կամ ուրիշ գործիքով դրերը եւ պատկերները խորացուցած են: Արդիւնքը, ինչպէս կը տեսնուի, բաւական կոշտ մետալ մըն է:

Ջ.- Ոսկի օրինակ մը, որ կը գտնուէր Պաթաւիոյ մէջ, ներկայիս կորսուած է:

Թիւ 6

Այս մետալը նոր հրատարակուեցաւ Սարգիսեանի կողմէ³⁹: Այնպէս կ'երեւի թէ կոխուած է Թիւ 5ի նման, բայց տարբեր կնիքով, բայց Ակոզմին վրայ կը պակսի ՅՈՒ. ՅԱՐՈՒԹԻ գրութիւնը: Նոյն ատեն Բեկոզմին վարի մասին վրայ աւելցուած է MOSES BENIAT գրութիւնը: Սարգիսեան, որ կը նկարագրէ այս մետալը, կը գրէ թէ MOSES BENIAT գրութիւնը մետալի վրայ զարնուած է գրի կնիքներով: Ուրեմն, այս գրերը մետալին մակերեսէն վար են եւ այսպէսով բոլորովին կը տարբերին միւս բոլոր գրերէն:

Ա.- Ոսկի, կլորակ, մեծութիւն՝ 39 հզրդմ. եւ կշիռ՝ 17.42 կրամ: Կը պահուի Հերմիթաժի մէջ, եւ թանգարանին թիւն է 1158:

Թիւ 7

Սարգիսեան⁴⁰ կը գրէ նաեւ նոյն կնիքով զարնուած մետալի մը մասին, որուն Ակոզմին եւ Բեկոզմին վարի մասին վրայ որեւէ գրութիւն չկայ: Սարգիսեան կը գրէ թէ Թիւ 5 մետալի ՅՈՒ. ՅԱՐՈՒԹԻ գրութիւնը աւելցուած է այս մետալին կնիքին վրայ՝ փորագրելին կողմէ: Հետեւաբար՝ նախ այս կնիքը չի նուած է, եւ որոշ թիւով մետալներ պատրաստուած: Յետոյ փորագրելին կնիքին վրայ աւելցուած են ՅՈՒ. ՅԱՐՈՒԹԻ բառերը: Իսկապէս, քանի որ այս վերջինէս շատ օրինակներ կան, Սարգիսեանի կարծիքը հաւանաբար ճիշտ է*:

Ա.- Ոսկի, Վիեննայի Միխայիլ Թանգարան:

37. Տե՛ս Ծանօթ. Թիւ 18:

38. Տե՛ս Ծանօթ. Թիւ 14:

39. Տե՛ս Ծանօթ. Թիւ 23:

40. Տե՛ս Ծանօթ. Թիւ 25:

* Այս գրութիւնը շատ անգամ ՅՈՒ. ՅԱՐՈՒԹԻ կարգացուած է: Երբ ուշադրութեամբ քննենք՝ կը տեսնենք որ իրականին մէջ 1 գիրը Վ է. այս նկատուածով՝ անունը պէտք է ՅՈՒՎ(ՀԱՆՆԻՍ) ՅԱՐՈՒԹԻՆ կարդանք:

Թիւ 8

Ակոզմը.- ՍՈՒՐԲ. ԱՄՈՒՍՆՈՒԹ:

Վերի շրջանակին մէջ

M. HOLTZHEY FEC

Ստորին եզերքի հորիզոնական գրութիւն

Դարձեալ՝ միւսներուն նման կը տեսնենք երիտասարդ ամուլը, խորանին երկու կողմը, աջ ձեռքերին սեղմած: Խորանին երեսին կը տեսնուին չորս սրտեր, վերի երկուքը՝ բոցավառ: Մետալին վերեւի ամպերուն մէջէն ճառագայթները կը շողան եւ կը հեղեղեն երիտասարդ ամուլը: Փեսային ձախ կողմը՝ հեռուն կը տեսնուի արմաւենիի ծառ մը:

Բեկոզմը.- ՆԱԽԱՏԵՍՈՒԹ ԱԾԱՅԻՆ:

Վերի շրջանակին մէջ

Թեւաւոր ոգին (winged genius), կանգնած դէպի ձախ, աջ ձեռքով վեր բռնած է բոցավառ ջահ մը, եւ ձախով՝ երկու սրտեր: Իր ետեւ կը տեսնուի աւազան մը, որուն մէջ կը լողան երեք կարասիներ: Աւազանին ձախ կողմը (դիտողին ալ ձախակողմը) կը տեսնուի աջ դարձած սփինքս մը. իսկ աջ կողմը՝ պատ մը, որ թատուկով զարդարուած: Հեռուն կը տեսնուի բաց ծովը, քանի մը առաջատանաւերով: Երկնքին մէջ կը տեսնուին քանի մը թռչուն ամպեր:

Ա.- Այս մետալը առաջին անգամ հրատարակուեցաւ Հերմիթաժի Սպասկիի կողմէ⁴¹, եւ կը ներկայացնէր բոլորովին նորութիւն մը: Ոսկի, կլորակ, մեծութիւն՝ 50 հզրդմ., կշիռ՝ 34.04 կրամ: Կը գտնուի Հերմիթաժի Թանգարանին մէջ, Թիւ 2519:

Բ.- Երկրորդ օրինակ մը, ոսկի, ստորագրեալիս հաւաքածոյին մէջ կը պահուի, դնուած 1968ին, Փարիզի մէջ: Կլորակ, տրամագիծ 50 հզրդմ., կշիռ 34.6 կրամ:

Գ.- Երրորդ օրինակ մը, պղինձ, կը պահուի Ս. Ղազարու Միխայիլ Թանգարանին մէջ (Վենետիկ): Կլորակ, տրամագիծ 50 հզրդմ., կշիռ 25.25 կրամ:

41. Տե՛ս Ծանօթ. Թիւ 19:

Թիւ 9

Ակոզմը.— ՍՈՒՐԲ ԱՄՈՒՍ — ՆՈՒԹԻՒՆ

Վերի շրջանակին մէջ

ԵՒ ԵՂԵՑԻՆ ԵՐԿՈ — ՔԻՆ Ի ՄԻ

ԳՈՒՑԱԹԻՆ

Մենային ստորոտը, հորիզոնական գրութիւն՝ երկու գծի վրայ
 Երիտասարդ ամուլին ոտքերուն տակ

Դարձեալ՝ երիտասարդ ամուլը, կանգնած խորանին երկու կողմերը, իրարու կը նային, ալ ձեռքերնին իրարու սեղմած: Խորանին վրայ կը տեսնուին երկու բոցավառ սրտեր, իսկ խորանին երեսին վրայ դարձեալ կան երկու բոցավառ սրտեր: Հարսին ալ կողմը եւ փեսային ձախ կողմը կը տեսնուին ամաթեղջիւրներ՝ ծաղիկներով լեցուած: Հարսին ու փեսային զլուխներուն վերեւ՝ կը տեսնուին թեւաւոր երկու հրեշտակներ:

Սարգիսեան⁴², զոյգին ոտքերուն տակի դրութիւնը կը կարգայ ԳՈՒՑԱԹԻՆ, եւ «յաւիտեան կեանք» նշանակութիւնը կու տայ այս բառին: Հայերէն յօդուածին մէջ՝ այս բառը գրուած է ԳՈՒՑԱԹԻՆ:

Երիտասարդ զոյգին վերեւ, երկու հրեշտակներ իրարու կը նային: Մենային այս մասը շատ մաշած ըլլալուն՝ պատկերը յստակ չէ:

Բեկոզմը.— ՆԱԽԱՏԵՍՈՒ — ԹԻՒՆ ԱԾԱՅԻՆ

Երկու կողմերու շրջանակին մէջ

ԼԱԻ ԵՆ ՈՐԿՈՒ — ՔԱՆ ԶՄԻ

Մենային ստորոտը, երկու հորիզոնական գծի վրայ

Խորանի մը վրայ կը տեսնուի բոցավառ սկիւզ մը: Խորանին ալ կողմը կը տեսնուի սեղան մը, որուն վրայ երկու աղաւնիներ՝ կտուց կտուցի կը համբուրուին: Ձախ կողմի սեղանին վրայ կան բոցավառ սրտեր: Սարգիսեան⁴³ կը գրէ թէ սեղանները զարդարուած են ժապաւէններով, որոնց վրայի դրութիւնը չի կարգացուիր:

42. Տե՛ս Ծանօթ. Թիւ 23:

43. Անդ:

Խորանին վերեւ՝ կը տեսնուին երկու ալ բաղուկներ, որոնց ձեռքերը իրար կը սեղմեն:

Դաշտին վերի մասը զարդարուած է եռանկիւնի մէջ գրուած ամենատես աչքով: Ծառադայթներ կը ցոլան եռանկիւնէն՝ ամէն ուղղութեամբ:

Ա.— Ոսկի, ձուածեւ, մեծութիւն՝ 52×47 հարդմ. ծանրութիւնը՝ 123.45 կրամ:
 Հերմիթաժ, Թանգարանի Թիւ՝ 1156:

Թիւ 10

Ակոզմը.— Թիւ 9ի պէս:

Բեկոզմը.— Թիւ 9ի պէս:

Սարգիսեան⁴⁴ կը գրէ՝ թէ Հերմիթաժի մէջ գտնուած փարձաթէ նոր մետաղ մը, արուեստով նման Թիւ 9ին, բայց տարբեր ծաւալով: Բեկոզմին պատուանդանին վրայ կը տեսնուին գրութեան հետքեր, իսկ վերին մասով անընթեռնելի: Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան նամակով մեզի մեծ մասով անընթեռնելի: Ս. Ղազարու Թանգարանին մէջ կայ ոսկիէ օրինակ կը հաղորդէ թէ Ս. Ղազարու Թանգարանին մէջ կայ ոսկիէ օրինակ մը, ուր՝ կողմնակի սեղանիկները զարդարող ժապաւէններուն վրայ յստակօրէն կը կարգացուի հետեւեալը: ՄԻ է — ԱՂԱԻՆԻ — ԻՄ ԿԱՏԱՐ — ԵԱԼ ԻՄ:

Ա.— Ոսկի, ձուածեւ, մեծութիւն՝ 45×55 հարդմ. ծանրութիւնը՝ 42.40 կրամ:
 Ս. Ղազարու Միթիթարան Թանգարան (Վենետիկ):
 Բ.— Արծաթ, նոյն մեծութեամբ, ծանրութիւնը՝ 23.78 կրամ: Հերմիթաժ, Թանգարանի Թիւ A3 49:

* * *

Ամփոփելով՝ կը տեսնենք որ ներկայիս մեզի ծանօթ են 23 մետաղներ, ներկայացնելով տասը տեսակներ: Այս 23էն չորս հատին ուր ըլլալը չի գիտցուիր եւ մէկն ալ կը ներկայացնէ Ակոզմի կնիքը (Թիւ 4): Տասը հատը ոսկի են, եօթը՝ արծաթ, երկուքը՝ պղինձ:

Թիւ 1. Ա.— Արծաթ, Հերմիթաժի Թանգարան:

Բ.— Պղինձ, Միմոնեան Հաւաքածոյ, Երեւան:

Գ.— Յիշատակուած Appelի կողմէ:

Թիւ 2. Ա.— Արծաթ, Hagueի արքայական Թանգարան:

Բ.— Արծաթ, ծախուած Schulmanի կողմէ, եւ ներկայիս ուր ըլլալը չի գիտցուիր:

44. Տե՛ս Ծանօթ. Թիւ 25:

- Թիւ 3. Ա.— Ոսկի, Պտուկեան հաւաքածոյ:
 Բ.— Արծաթ, ոսկեղօծ, Ս. Ղազարու Մխիթ. Թանգարան (Վենետիկ):
 Գ.— Արծաթ, Hagueի արքայական Թանգարան:
 Դ.— Արծաթ, Պտուկեան հաւաքածոյ:
- Թիւ 4. Ա.— Ակողմի կնիք:
- Թիւ 5. Ա.— Ոսկի, Պտուկեան հաւաքածոյ:
 Բ.— Ոսկի, Հերմիթաթի Թանգարան:
 Գ.— Արծաթ, Hagueի արքայական Թանգարան:
 Դ.— Արծաթ, ոսկեղօծ, Ժախուած Schulmanի կողմէ. ներկայիս՝ ուր ըլլալը չի գիտցուիր:
 Ե.— Ոսկի, Պաթաւիոյ մէջ, կորսուած:
- Թիւ 6. Ա.— Ոսկի, Քիւ 5ի տարբերակ, Հերմիթաթի Թանգարան:
- Թիւ 7. Ա.— Ոսկի, Քիւ 5ի տարբերակ, Մխիթարեան Թանգարան (Վիեննա):
- Թիւ 8. Ա.— Ոսկի, Պտուկեան հաւաքածոյ:
 Բ.— Ոսկի, Հերմիթաթի Թանգարան:
 Գ.— Պղինձ, Ս. Ղազարու Մխիթ. Թանգարան (Վենետիկ):
- Թիւ 9. Ա.— Ոսկի, Հերմիթաթի Թանգարան:
- Թիւ 10. Ա.— Ոսկի, Ս. Ղազարու Մխիթ. Թանգարան (Վենետիկ):
 Բ.— Արծաթ, Հերմիթաթի Թանգարան:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1.— Կ'արժէ անդրադառնալ այն կարեւոր հարցին՝ թէ ի՞նչ պարագաներու տակ այս մետալները կոխուած են, եւ ո՞ր արուեստագէտներու հեղինակութեամբ:

Գիտենք որ հեթանոսական շրջաններէն սկսեալ, միշտ սովորութիւն եղած է ամուսնութեան առթիւ երիտասարդ ամուլին տալ նուէրներ: Այս նուէրները կու գային բարեկամներէն եւ ազգականներէն, եւ մանաւանդ հարսին եւ փեսային ընտանիքէն: Հայաստանի մէջ, մինչեւ մեր օրերը սովորութիւն էր հարսին վրին անցընել ոսկիներու մանեակ մը:

Եւրոպայի մէջ, շատոնց սովորութիւն եղած էր՝ երիտասարդ ամուլին տալ դրամական նուէրներ, թէ՛ իբր օժիտ եւ թէ՛ իբր ա-

պացոյց՝ որ երկու ընտանիքները լրջօրէն կը բաղձային ազգականական կապեր հաստատել:

Յաջորդաբար, փոխանակ միայն դրամ տալու, սովորութիւն եղաւ որոշ դարդարանքներ եւ կամ մետալներ պատրաստել, որոնք ո՛չ միայն նիւթական արժէք կը ներկայացնէին, այլ նաեւ միաժամանակ ամուսնութեան սրբութիւնը կը շնորհէին եւ երիտասարդ ամուլին խրատներ կու տային⁴⁵:

Երբ Թադաւորական կամ իշխանական ամուսնութիւններ տեղի կ'ունենային, մասնաւոր մետալներ կը կոխէին, այս դէպքը յաւերճացնելու համար, եւ նոյն ատեն իբր նուէր կու տային ամուսնա-ժացնելու համար, եւ նոյն ատեն իբր նուէր կու տային ամուսնա-ցող զոյգին: Այս տեսակ մետալներ ժողովրդական դարձան ԺԴ-ԺԹ. դարերուն: Ժամանակի ընթացքին, ամուսնական մետալներ կոխեցին ո՛չ միայն իշխաններ, այլ նաեւ կարեւոր անձեր եւ նոյնիսկ հարուստ վաճառականներ:

Եւրոպական ամուսնական մետալներուն վրայ կը տեսնենք ձեռք ձեռքի տուած զոյգեր, եւ ընդհանրապէս սա գրութեամբ. «Այն ուր Աստուած կը միացնէ՝ մարդ պէտք չէ բաժնէ». այս պատուէրը կը տեսնուի դանաղան լեզուներով, ապացուցանելով այս մետալներուն ժողովրդականութիւնը՝ տարբեր երկրներու մէջ:

Հայկական մետալներու վրայի գրութիւնը չէ, այլ կը ցոլացնէ Քրանսերէն գրութեան պարզ Թարգմանութիւնը: Ասոնք ոգիով իսկա-դուտ հայկական ամուսնական պատուէրները: Ասոնք ոգիով իսկա-պէս հայկական են:

ԺԴ-ԺԹ դարերուն միջադարձին առեւտուրին մէջ շատ անգամ հաշիւները կ'ըլլային Վենետիկի ոսկի տուկատին վրայ: ԺԹ դարուն այս ոսկի տուկատները կը կշռէին 3.49 կրամ եւ կը պարունակէին 3.44 կրամ ոսկի: Ասկէ կ'եղրակացնենք որ մեր ամուսնական մետալները դրամական բաւական արժէք կը ներկայացնէին:

Այսպէս կ'որոշուին ոսկիները (Քիւ 5, 6, 7) որ կը կշռեն շուրջ 18 կրամ, հինգ տուկատի արժէք ունէին. Քիւ 3 ոսկին, որ կը կշռէ 30 կրամ, կ'արժէր 8.6 տուկատ. Քիւ 8ը՝ շուրջ 10 տուկատ. Քիւ 9ը, որ կը կշռէր 123.45 կրամ, կ'արժէր 35 տուկատ:

2.— Ամուսնական մետալներու կարեւորութիւնը յայտնի կ'ըլլայ՝ երբ մանաւանդ նկատի առնենք որ այդ մետալներէն ոմանք ստորադրուած են յայտնի արուեստագէտներու կողմէ:

Այսպէս՝ Քիւ 8 մետալը ստորագրուած է Martinus Holtzheyի (1697-1764) կողմէ: Իր ողջութեան, M. Holtzhey ամէնէն նշանա-

45. JULES FLORANGE, L'Amour et le Mariage dans la Numismatique, Paris 1936.

և որ մետաղագործն էր Ամսդերտամի մէջ, թէեւ կային ուրիշներ ալ՝ Հոլանտայի միւս քաղաքներուն մէջ:

Իր մահէն ետք, որդին Johan George Holtzhey շարունակեց իր հօր գործը: Օր. Gay van der Meer⁴⁶ հետեւեալը կը գրէ, առնելով van Kerkwijk⁴⁷ յօդուածէն, ուր J. G. Holtzhey-ի 1777-1784 թը-
ւականներու առուծախի նոթատետրէն ընդօրինակուած էր այսպէս.

«Սեպտ. 20, 1780, կանխիկ ծախեցի Ալեքս տի Մասսի, հետեւեալ պարսկական (այսինքն՝ հայկական, քանի որ Նոր-Ջուղայեցի-ները իբր Պարսիկ ճանչցուած էին՝ իրենց հպատակութեան պատ-
ճառաւ - Ծանօթ. Հեղ.) ոսկի մետաղները:

5 հատ խոշոր - կշիռքով ունկ. - $1.2\frac{3}{4}$, $1.2\frac{1}{2}$, $1.2\frac{1}{4}$, $1.2\frac{1}{4}$ = $5.12\frac{1}{4}$ ունկ (oz):

5 հատ փոքր - 12, 11.5, 11.2, 11.25, 10.75 dwt. որ կը հաւա-
սարի 2.17 ունկի:

Ամբողջապէս 8.925 ունկ, որ կը հասնի 472.18 Ֆլորինի: Վճա-
րեց 90 տուկատ, որ սխալ է, որովհետեւ պէտք է հաշուել կշիռքով
472.10 Ֆլորինի»:

Այս թիւերը եւ կշիռները պարզաբանելու համար ըսենք՝ որ մէկ
ունկը (oz) կը կշռէ 31.10 կրամ եւ մէկ dwt. որ ունկին քսաներորդն
է՝ 1.55 կրամ: Holtzhey-ի հաշիւին մէջ $1.2\frac{3}{4}$ կը ներկայացնէ 1 oz,
այսինքն՝ 31.1 կրամ, եւ $2\frac{3}{4}$ dwt = $2.75 \times 1.55 = 4.2625$ կրամ:

Հինգ խոշոր մետաղները կը կշռէին 5 ունկ (oz) եւ 1.225 dwt.
որ կը հաւասարի $5 \times 31.1 = 155.5$ կրամի եւ առաւել $1.225 \times 1.55 =$
 1.89875 կրամ: Ուրեմն, մեծ ոսկի մետաղին հասարակ կշիռն էր
 $155.5 + 1.84875$ բաժնուած հինգով, որ կը հաւասարի 32.049 կրամի:
Հինգ փոքր մետաղները կը կշռեն $12 + 11.5 + 11 + 11.25 + 10.25 = 57$
dwt. (քսաներորդի): Այսինքն՝ $57 \times 1.55 = 88.35$ կրամ, եւ իւրա-
քանչիւրը՝ 88.35, բաժնուած հինգով՝ կը հաւասարի 17.67 կրամի:

Այս հաշիւներէն յայտնի կ'ըլլայ որ մեծ մետաղները կը ներկա-
յացնեն թիւ 8 մետաղները, եւ փոքրերը թիւ 5, 6, 7 մետաղները:

Holtzhey կը գրէ թէ ստացաւ 90 տուկատ դրամ՝ այս 10 մե-
տաղներուն համար: Այդ ժամանակ՝ 90 ոսկի տուկատները կը կշռէին
 $90 \times 3.49 = 310.5$ կրամ: Սակայն 10 մետաղներուն կշիռն էր $155.5 +$
 $1.89875 + 88.35$ կրամ, որ կ'ընէ 245.74 կրամ: Երկու կշիռներուն
տարբերութիւնը կը ներկայացնէ Holtzhey-ի աշխատանքի վարձա-
տրութիւնը: Նշանակելի է նաեւ որ այդ ժամանակ՝ մէկ ոսկի տու-

46. Տե՛ս Ծանօթ. թիւ 20:

47. Տե՛ս Ծանօթ. թիւ 15:

ՀՈԼԱՆՏԱ ԿՈՒՈՒԱԾ 18րդ ԴԱՐՈՒ ՀԱՅ ՄԵՏԱԼՆԵՐԸ

Լուսանկարներ եւ նմանահանութիւններ



EIGHTEENTH CENTURY ARMENIAN MEDALS STRUCK IN HOLLAND

Photos and Reproductions



1



3



2



4



1



3



2



4




5



6



7



8



9



5



6



7



8



9





5V



10



12



11



14



13

կատր կ'արժէր Հոլանտական 5.25 Ֆլորին, եւ 90 տուկատը կ'արժէր $90 \times 5.25 = 472.5$ Ֆլորին, որ կը հաւասարի նշանակուած գումարին:

Օր. G. van der Meer իր վերջի նամակին մէջ⁴⁸ կը գրէ թէ Holtzheyի նոթատետրին մէջ յիշատակուած է նաեւ ուրիշ հայկական մետաղներու ալ վաճառումը, եւ ասոնք դեռ անտիպ են: Նոթատետրին մէջ մեծ մետաղներուն արժէքը դրուած է 63 Ֆլորին, եւ փոքրերունը՝ 31.50 Ֆլորին: Այս հաշիւով՝ հինգ մեծ եւ հինգ փոքր մետաղները $63 \times 5 + 31.50 \times 5 = 513 + 157.5 = 472.5$ Ֆլորին, զոմարուելով կու տան $63 \times 5 + 31.50 \times 5 = 513 + 157.5 = 472.5$ Ֆլորին, որ կը համապատասխանէ վերի գումարին: Holtzhey կը գրէ՝ թէ ասոնք ունէր իր խանութին մէջ եւ կը ծախէր: Թերեւս այս մետաղները շատ դորժածուած են:

Կը տեսնենք որ կ'ընդ մեծ մետաղները (թիւ 8) ստորագրուած են M. Holtzheyի կողմէ, իսկ փոքրերը (թիւ 5, 6, 7) անոր զաւկին J. G. Holtzheyի կողմէ: Այնպէս կ'երեւի թէ թիւ 7ի կնիքը ծառայած է թիւ 5 եւ 6 մետաղներու արտադրութեան համար⁴⁹:

Ձարմանալի է որ նոյն տիպով ձուած եւ մտաւները (թիւ 1 եւ 9) ստորագրուած չեն: Այս երկուքը միւսներուն արուեստի նրբութիւնը չունին, եւ դժուար է վերագրել նոյն արուեստագէտներուն: Van der Meer⁵⁰ չեղտած է այս կէտը, բայց թէ՛ Սարգիսեան⁵¹ եւ թէ՛ van der Meer⁵² կ'ընդունին որ ասոնք կրնան Holtzheyի աշխատանոցէն ելած ըլլալ:

Այս աշխատանոցին մէջ կը շինուէին նաեւ արծաթ մետաղներ, ինչպէս կը հետեւցնենք Holtzheyի նոթատետրին մէջ յիշատակուած հայ արծաթ մետաղներէն⁵³:

Կ'արժէ յիշել որ Holtzhey կոխած է նաեւ Հոլանտական ամուսնական բաղմաթիւ մետաղներ, որոնք նախատիպն (prototype) են հայկական մետաղներուն: Ասոնցմէ ոմանք հոս կը ներկայացնենք⁵⁴, չեղտելու համար անոնց նմանութիւնը եւ տարբերութիւնը հայկական մետաղներէն: Թիւ 10, կոխուած Martinus Holtzheyի կողմէ, 1746ին. ամուսնական 25ամեակի մետաղ մըն է: Նոյնպէս թիւ 15: Թիւ 10-14ի նմանութիւնը մեր թիւ 5 եւ 8 մետաղներուն հետ՝ յայտնի է:

J. G. Holtzheyի Հոլանտական մետաղներու նմոշներ են թիւ 12, նի է:

48. 1974, Ապրիլ 16 թուակիր նամակ, ուղղուած ստորագրեալիս:

49. Տե՛ս Ծանօթ. թիւ 23:

50. Տե՛ս Ծանօթ. թիւ 20 եւ 48:

51. Տե՛ս Ծանօթ. թիւ 23:

52. Տե՛ս Ծանօթ. թիւ 48:

53. Ամդ:

54. Այս նկարները եւ անոնց հեղինակութիւնները ինծի շնորհիւ փոխանակեց Փրոֆ. Van der Meerի կողմէ, 25 Մարտ 1974ին գրուած նամակով:

ները կը շնորհակալ թէ երկու անգամ պիտի միանան՝ դառնալու մէկ անձ (Աստուածաշունչէն), եւ թէ լաւ է որ երկու անձ միասին ըլլան՝ բան թէ միեւնոյն մնան:

Գալով անձնական ձուլած մետաղներուն, ասոնք ալ կը ներկայացնեն կեանքի եւ քրիստոնէական որոշ հաւատալիքներ: Ակոզմի շրջանակին մէջ, յիշատակարանի նման, կը տեսնենք անձի մը մասին տեղեկութիւն, իսկ դաշտին մէջ՝ առածային դրուածներ, «խոհեմութիւն – առաքինութիւն – յաղթէ ամենայնի», եւն... որոնք կը սլափեցնեն առաքինի անձի մը կեանքին փրկիւթիւթը:

Այս մետաղներուն Բեկոզմի վրայ կը տեսնենք կրօնական պատգամներ, հաւատքի խորհրդանշաններ: Այսպէս՝ «մաքուր հաւատ – հաստատում յոյս – կատարեալ սէր»: Իսկ կեդրոնը «Հայր – Որդի – Հոգի» եւ «Աստուած» զուտ կրօնական հանգամանք ունին: Իսկ տիպերը, ինչպէս խաչը, Աստուածաշունչը, Սկիւզը, Տասը Պատուիրաններու Տախտակները եւն... կը ցոլացնեն այս կրօնական զգացումները:

Այս մետաղները շատ գեղեցիկ արուեստով շինուած են, եւ գործն են առաջնակարգ արուեստագէտի: Ո՞ր էր այդ արուեստագէտը, եւ ո՞ր յղացաւ այս մետաղներուն տիպին դադափարը. հարցումներ են՝ որոնք կը սպասեն լուծումի:

* * *

Սոյն յօդուածի աւարտին, պարտք կը դնամ իմ մասնաւոր շնորհակալութիւններս յայտնելու հետեւեալ անձներուն, որոնք ինծի օգնեցին ներկայ ուսումնասիրութեան պատրաստութեան համար:

Սպահանի Տիար Լ. Գ. Մինասեանին, որ Նոր Զուլայի դիւանները քննեց՝ խաղաղեան եւ Մասեհեան ընտանիքներու մասին տեղեկութիւններ գտնելու համար:

Օր. Gay van der Meer, որ ինծի շնորհակալութիւններով 11-15 մետաղներու նկարները, Holtzheyի նոթարիին պարունակութիւնը, ինչպէս նաեւ անծանօթ van der Chipsի գրութեան մասին տեղեկութիւններ:

Գրշ. Տիրան Սրբ. Ներսիսեանի, որ մետաղներու գրութեան կրօնական բնոյթը բացատրեց ինծի:

Պր. Edwin P. McIntyreի, որ ազնուօրէն պատրաստեց մետաղներու նկարները:

ԴՈԿՄ. ԶԱՐԵԶ ՊՏՈՒԿԵԱՆ

Résumé

EIGHTEENTH CENTURY ARMENIAN MEDALS STRUCK IN HOLLAND

(By PAUL Z. BEDOUKIAN)

During the sixteenth to eighteenth centuries, although they had long since lost their political independence, the Armenians constituted an important commercial class in the then powerful Turkish and Persian empires. Their trading activities extended from China and India to Western Europe.

Taking advantage of the position of Amsterdam as a leading trade center in the early seventeenth century, many Armenian merchants from Turkey and Persia sought commercial ties with Holland and soon formed a prosperous colony in Amsterdam. The first Armenian prayer house there was established in 1663 and by permission, a church was built in 1713 and rebuilt in 1749. The church ceased its activities in 1806 because of the gradual decline in the number of Armenian merchants, and its properties were liquidated in 1874.

It is interesting that the Armenians also established a printing house in Amsterdam and from 1660 to 1716 published over fifty titles, including the first edition of the Armenian Bible in 1666. These books were secretly exported to Armenians in Turkey where the publication of Armenian books was prohibited.

The prosperity of the Armenian colony is indicated by paintings from Dutch masters such as J. B. van Mour who depicted Armenian scenes in 1737. In turn, it is not surprising that the Armenians adopted European customs, including the striking of marriage and other medals.

It is fortunate that some of these medals have survived. Twenty three are recorded in this article. Four of these were mentioned in previous literature but their present whereabouts are unknown. One shows the obverse of a die but no medals are extant. The remaining are as follows:

Ten gold medals: No. 3-1; No. 5-3; No. 6-1;
No. 7-1; No. 8-2; No. 9-1; No. 10-1;

Seven silver medals: No. 1-1; No. 2-1; No. 3-2;
No. 5-2; No. 10-1;

Two copper medals: No. 1-1; No. 8-1.

The round marriage medal, No. 8, is signed by the famous Dutch medalist, Martinus Holtzhey (1697-1764). The smaller pieces, Nos. 5, 6, 7, all from similar dies, are by his son, J. G. Holtzhey (1729-1807). They all bear the inscription HOLY MATRIMONY and DIVINE PROVIDENCE. The oval medals, Nos. 1 and 9 are patterned after the Holtzhey medals but lack their artistic workmanship. It is thought that they were issued from the Holtzhey workshop at a later period. Apparently Nos. 5 and 6 were derived from the original die made for No. 7. The writing in the exergue of Nos. 1 and 5 is not clear but it probably represents the name of a person. The writing on the obverse of No. 9, is «AND THE TWAIN SHALL BE ONE,» and on the obverse reads «BETTER TWO THAN ONE,» to indicate the desirability of marriage as against the single state. These writings represent the Armenian concept of marriage and differ from the inscriptions on most European marriage medals.

Photographs Nos. 11, 15, Dutch examples of the work of M. Holtzhey (Nos. 11, 15) and J. G. Holtzhey (Nos. 12, 13, 14) represent the prototype of the Armenian marriage medals.

The weights of the gold pieces (No. 2-27 gms., No. 5, 6, 7-18 gms., No. 8-34 gms. and No. 9-123 gms.) indicate that these medals involved a considerable investment on the part of the purchaser.

The ovals, Nos. 2, 3 and 4, have an entirely different design, and should be considered commemorative rather than marriage medals. No. 2 was struck by a wealthy merchant of Nor Julfa, near Isfahan in Persia. The legend in the perimeter, translated freely, reads: «JOHN THE SON OF JACOBAN, OF THE FAMILY OF KHALDARIAN, MERCHANT, BORN IN 1710 IN NEW JULFA AND NOW IN AMSTERDAM 1740.» The writings in the field on the left, right and bottom read: «PRUDENCE,» «VIR-TUE,» «CONQUER ALL (OBSTACLES.)» On the reverse, above, left and right appear «PURE FAITH,» «FIRM HOPE,» «PER-FECT LOVE.» In the circles of the triangle are the words «FATHER,» «SON,» «SPIRIT,» and in the center, «GOD.» The lines forming the triangle read «WHO IS» and joining the center «IS,» referring to God.

These legends represent the moral and religious dogmas of the merchant who had the medal struck or the philosophical concepts of the period.

The Khaltarian family was prominent in Persia and had built a church in New Julfa. Almost a quarter of the town was named after members of the family which had branches not only in Amsterdam but also in India and the East Indies where they were engaged in commercial activities.

They were apparently patrons of the arts and encouraged printing activities in Amsterdam. A Bible printed in Amsterdam in 1713 mentions the name in the colophon.

Medals No. 3 and 4 are very similar in styling to No. 2 and there is little doubt that all three were the work of one medalist. With the exception of the inscription in the perimeter, the writing is the same in all, although there are slight differences in the spelling of certain words. Freely translated, the perimeter writing in medals 3 and 4 reads: «ALEXAN, THE SON OF MAH-DES MASSE OF ANABAD, MERCHANT, BORN IN THE YEAR 1727, AND NOW IN AMSTERDAM 1742.» A search for the identity of this merchant revealed that he was originally from Constantinople. An unpublished study by De Roeve in 1886 in the archives of Amsterdam disclosed that Masse had a brother in Constantinople to whose family he willed his wealth in the event that his own two sons died childless. It also appears that this person was the Alex. di Masse to whom J. G. Holtzhey sold five large and five small gold medals in 1780.

The design of these three medals is so unlike that of the marriage medals that the idea has been put forward that it was not local in origin and that it was conceived by an Armenian and executed in Holland. The actual origin of the design and the name of the medalist are unknown at this point in time.

Because of the oppressive Mohammedan rule, it was not possible for Armenians to strike medals or engage in other cultural activities in their homeland. Printing and striking of medals were therefore carried out in European countries, but it was in the relatively freer atmosphere in Holland that these activities flourished to the greatest extent in the 16th-18th centuries.

PAUL Z. BEDOUKIAN